



05 Նոյեմբերի, 2010թ.

Ե-1789

ԿԱՆԱՆՑ ՈՒՍՈՒՐ ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՏԻԿԻՆ Լ. ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Ահարոնյան

Ս. թ. հոկտեմբերի 15-ին ես մասնակցել եմ «Կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ-ի կողմից կազմակերպված «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկմանը և բանափոր հայտնելի իր կարծիքն այդ նախագծի վերաբերյալ։ Սակայն անհրաժեշտ եմ համարում տվյալ նախագծի վերաբերյալ իմ դիտողություններն ու առաջարկությունները գրավիր տեսքով ներկայացնել Ձեզ։

1. Նախարարաց, պետք է նշեմ, որ ՀՀ գլխավոր դատավագության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի առանձին նախագծի, որով առաջարկվում է այդ թվում որոշ հանցատեսակների համար փոխականացման պատճառակի և ազատազրկման վերին սահմանը, ամրագրել 20 տարին՝ ներկայիս 15 տարվա փոխարեն։ Նախագծում առաջարկվում է նաև ՀՀ քրեական օրենսգրքից հանել նաև կրկնակիության հիստիտուտը։ Կարծում եմ, որ ՀՀ քրեական օրենսգրքի 18 գլխով նախատեսված հանցագործությունները բաժնում առաջարկվող լրացումներն ու փոփոխությունները պետք է ներկայացնել նաև ՀՀ գլխավոր դատավագությանը՝ նրանց կողմից մշակված նախագծի հետ համատեն քննարկելու նպատակով։
- 1.1 Նախագծում, ինչպես նաև գործող ՀՀ քրեական օրենսգրքում «սերուալ» բառնոր փոխարինելի «սեռական» բառներով։
- 1.2 Նախագծի 138-րդ հոդ. «Քոնաբարությունը՝ տղամարդու սեռական հարաբերությունը կնոջ հետ՝ շարադրելի «բոնաբարությունը՝ սեռական հարաբերություն անձի հետ՝...»։ Բոնաբարությունը, տեսականորեն սեռական հարաբերություն է /ակտ/ առանց մյուս կողմի համաձայնության կամքին հակառակ<sup>1</sup>/։ Բոնաբարությունը, նախկին խորհրդային պետություններում, այդ թվում նաև Հայաստանում, հասկանում ենք միայն ավանդական ձևը՝ տղամարդու սեռական հարաբերությունը կնոջ հետ՝ նրա կամքին հակառակ։ Սակայն գործնականում շատ պետություններում և ՀՀ-ում լինում են դեպքեր, երբ բոնաբարությունը կատարվում է միևնույն սեռի նկատմամբ, մասնավորապես ազատազրկման վայրերում, բանակում և այլն։ Այդ իսկ պատճառով էլ, ներկայում նվիրական պետությունների և աշխարհի այլ պետությունների օրենսդրական դաշտում «բոնաբարությունը» ընդլայնված իմաստ ու բովանդակություն /դիսպոզիցիա/ ունի, դրա տակ ընկնում են ինչպես տղամարդու սեռական հարաբերությունը կնոջ հետ՝ նրա կամքին հակառակ, այնպես էլ կնոջ և կնոջ, տղամարդու և տղամարդու միջև։ Եթե Նախագծի 138-րդ հոդ. կատարվի փոփոխություն և նշվի ոչ միայն ավանդական բոնաբարությունը, այլ նաև «միևնույն սեռի նկատմամբ կատարված բոնաբարությունը», ապա ինքնարտինյան «համասեռամոլություն» բառը դուրս կմղի կվերացվի/ գործող օրենսգրքից և Նախագծի 139-րդ հոդ. 1-ին մասից, ինչը մի քանի իրավաբանների և փորձագետների մտահոգում էր «համասեռամոլություն» բառի դուրս մղումը/վերացումը/ ՀՀ քրեական օրենսգրքից։
- 1.3 Նախագծի 138-րդ հոդ. 3-րդ մասի 1-ին կետում «տառնչորս տարին չլրացած անձի» փոխարեն շարադրելի «փորրահասակ» բառով<sup>2</sup> այսինքն մինչև 14 տարեկան /սեռական հաստության չհասած անձ/ կամ «սինչև տասնութ տարին չլրացած անձի» բառերով։ Հարկ է նկատել, որ նոյն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով արդեն իսկ նշված է «անշափահասի նկատմամբ», միգուց այդ կետոր հանդի։
- 1.4 Նախագծի 138-րդ հոդ. 3-րդ մասի 2-րդ կետում «ծնողի, մանկավարի կամ այն անձի կողմից, ում վրա դրված է ներմշայի դաստիարակության պարտականություն» փոխարեն շարադրել «ծնողի, որդեգրողի, խնամակալի, իոգաբարձուի և մանկավարժի» բառերով։

<sup>1</sup> Ծառ հաճախ բոնաբարությունը գործորդվում է ֆիզիկական ուժի գործադրմամբ կամ դրա սպառնալիքով, կամ հոգեբանական ճնշմամբ՝ առանց ֆիզիկական ուժի գործադրմամբ։ Այդ դեպքում, շատ հաճախ օգտագործվում է տուժողի կախյալ վիճակը բոնաբարությաց օրինակ՝ տնտեսական, սոցիալական, հոգեբանական։ Հնարավոր է տուժողի անօգնական վիճակն օգտագործելով։ Օրինակ՝ անգիտակից վիճակը, ալկոհոլի, թմբանյութի ազդեցության տակ գտնվելը, հոգեկան խանգարում կամ հոգեպես անհավասարակշիռ վիճակում գտնվելը։

<sup>2</sup> «18 տարին չլրացած» ասելով, հասկանում ենք անշափահաս, ներմշայի ՀՀ քառ. օրենսգրք, «Երևանի իրավունքների մասին» ՀՀ օրենք, «Երևանի իրավունքների մասին» ՄԱԿ կոնվենցիա/։

- Ճիշտ է «որդեգրող» ծնող է համարվում, բայց նրա կողմից որդեգրվածին բռնաբարելու դեպքում, պետք է նախատեսվի խիստ պատիժ, հատկապես եթե տուժողը անչափահաս է եղել: Քանի որ այդ դեպքում կարող ենք ասել, որ նա երեխային որդեգրել է՝ սեռական շահագործման ենթարկելու նպատակով կամ վերջինս եղել է պետքի և/սեռական հարաբերություն փոքրահասակների հետ/ և նրա պետքի հանդիսանալու հանգամանքը հայտնի չի եղել պետությանը: Այստեղ էլ տեղին է նշել, որ պետք է խստացնել նաև երեխաների որդեգրման կարգը մեր հանրապետությունում, նման դեպքերում ավելի տեղին կլիներ որդեգրողի համար նախատեսել հատուկ առանձին դրույթ՝ քրեական պատասխանատվության ենթարկելու մասին: Այդ դեպքում՝ կլուծներ նաև երեխաներին թրաֆիկինգի գերծ պահելու և պաշտպանելու հարցերը:
- 1.5 Նախագծի 139-րդ հոդ. 1-ին մասում հանել «համասնուամոլություն» բառը, քանի որ համասնուամոլությունը դա գործողություն չէ, իսկ անձը քրեական պատասխանատվության է ենթարկվում որևէ հանցափոր արարք կամ գործողություն կատարելու համար, այլ ոչ թե լինելու համար: Փոխարենն առաջարկում եմ շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Արվամնյական կապը, եթե կատարել է ֆիզիկական և հոգեբանական բռնություն, սպառնայիքներ գործածելով, կամ անչափահասի նկատմամբ, կամ տուժողի կախյալ վիճակն օգտագործելով» /ունենալու 2.2 կետով/:
- 1.6 Նախագծի 139-րդ հոդ. 3-րդ մասի 1-ին կետում ևս նշել «փոքրահասակ երեխայի նկատմամբ» կամ «մինչև 18 տարին չլրացած», իսկ 3-րդ մասի 2-րդ կետում՝ «ծնողի, որդեգրողի, խնամակալի, հոգաբարձուի և մանկավարժի» բառերով:
- 1.7 Նախագծի 140-րդ և այլ հոդածներում պետք է աշխատել խուսափել «համասնուամոլություն» բառն օգտագործելուց, այն արարք կամ գործողություն չէ: Բացի այդ, լրացուցիչ հայտնում եմ, որ Հայաստանի դիմումը Եվրոպայի խորհրդին անդամակցելու վերաբերյալ Եվրոպայի խորհրդի թիվ 221/2000/ Կարծիքի՝ (III գլխի /ա/ ենթակետ) Հայաստանը անդամակցությունից հետո վեց ամսվա ընթացքում ընդունելու է քրեական օրենսգրքի 2-րդ /հատուկ/ մասը, որով դեռ յուրեւ կվերացնի մահապատիժն ու կապարենականացնի փոխադարձ համաձայնությամբ չափահաս անձանց արվամոլական կապը, ինչն արդեն արվել է:
- 1.8 Եթե իմբ ընդունենք ՀՀ գլխավոր դատախազության կողմից մշակված նախագծում կրկնակիության հնատիսուտի վերացումը, ապա բոլոր հոդածներից պետք է հանել «Վրկին անգամ» բառակապակցությունները:
- 1.9 Ինչպես Նախագծի 140-րդ, այնպես էլ այլ հոդածներում շարադրել «ծնողի, որդեգրողի, խնամակալի, հոգաբարձուի և մանկավարժի» բառերով:
- 1.10 Նախագծի 141-րդ հոդ. «ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի հետ» բառերը շարադրել «մինչև տասնութ տարին չլրացած անձի հետ» բառերով, «ակնհայտ» ասելով ինչ ներ հասկանում, կարծում եմ ավելորդ բառ է:
- 1.11 Նախագծի 141-րդ հոդ. 3-րդ մասի 3-րդ կետում՝ նշված է «12 տարին չլրացած անձ»: Հարկ եմ համարում նշել, որ օրենսգրքում տարբեր տարիքներ նշելը խառնաշփոթ է առաջացնում և չի բխում «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ կոնվենցիայի, ինչպես նաև ՀՀ բաղաքացիական օրենսգրքով սահմանված /հհ. 29 և 30/ պահանջներից:
- 1.12 Նախագծում հաճախ օգտագործվող «14 տարին չլրացած» բառերը փոխարինել «փոքրահասակ» կամ «18 տարին չլրացած» բառերով: Այս դեպքում առաջարկում եմ պատժի մասը խստացնել, եթե հանցափոր արարքը թույլ է տրվել անչափահասի նկատմամբ, պետք չէ տարբեր տարիքներ նշել՝ 12, 14, 16, 18 և այլն, դա նույն է ինչ ասենք 30, 45, 60 տարին լրացած:
- 1.13 Նախագծի 141<sup>1</sup>-րդ հոդ. ձևակերպումն անհասկանալի է և մոլորենող, կարելի է շարադրել «տասնութ տարին չլրացած անձի կողմից» կամ այն վերախմբագրել:

*Աթոռացուածություն*

ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ  
Կենտրոնի տնօրեն